ՋԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՍԿՐՏԻՉ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ (1892-1907)

Ներկայացնելով Խրիմյան Հայրիկի կաթողիկոսության շրջանում Մայր Աթոռի մշակութային կյանքը, չենք կարող չառանձնացնել Խրիմյանի անձը և նրա անձնական ավանդը այդ գործում: Խրիմյան Հայրիկը թեև բարձրագույն կրթություն չէր ստացել (սովորել է Լիմ և Կտուց անապատների դպրոցներում), սակայն մշակույթի մարդ էր և իր եռանդաշատ հոգևոր գործունեության հենց սկզբից բացում է կրթական օջախներ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում (հետագայում՝ նաև Արևելյան Հայաստանում), հիմնում տպարան, գրադարան, հրատարակում թերթեր և ստեղծում առանձնահատուկ ազգային մշակութային արժեք ունեցող գրական գործեր: Նա 1848-50 թվականներին Պոլսի Խասգյուղ թաղամասի աղջկանց վարժարանում եղել է հայերենի և ազգային պատմության ուսուցիչ: 1857-ին հիմնադրել է Վարագա վանքի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը, գրադարանն ու թանգարանը: Այստեղ Ռաֆֆու հետ միասին հիմնել է հայրենասիրական գրականության խմբակ: 1863-ին վերաբացել է Տարոնի վարժարանը: 1856-ին Վարագի մեջ հիմնել է տպարան, ուր երկու տարի անց հրատարակել է «Արծիվ Վասպուրականի» ամսաթերթը: 1863 թվականին հրատարակել է նաև «Արծվիկ Տարօնոյն» ամսաթերթը: 1880-ին Վանում Խրիմյանը բացել է երկրագործական դպրոցներ: Խրիմյանից մնաց ժառանգել ենք հայրենասիրական, բարոյախրատական բնույթի առանձնահատուկ նշանակություն ունեցող գործերի հավաքածու՝ «Հրավիրակ Արարատյան», «Հրավիրակ երկրին Ավետյաց», «Մարգարիտ Արքայության Երկնից», «Խաչի նաւ», «Ժամանակ և խորհուրդ յուր», «Վանգույժ», «Հայգույժ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամվել», «Պապիկ և թոռնիկ», «Թագավորաց ժողով», «Հիսուսի վերջին շարաթ», «Կորուսեալոյ իմաստութեան»:

Փորձենք մեր ուժերի ներածին չափով և Աստծու օգնությամբ առանձին բաժիններով համառոտակի ներկայացնել Խրիմյանի կաթողիկոսության օրոք Ս. Էջմիածնի մշակութային կյանքի ընդհանուր նկարագիրը:

I

ՀՈԳԵՎՈՐ ԳԵՍԱՐԱՆ

«Դպրեվանքը ժողովրդինն է»
ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Խրիմյանը, դառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոս, բացում ե վերաբացում է բազմաթիվ դպրոցներ Հայաստանի տարբեր նահանգներում և գավառներում: Նա իր կոնդակներով հանախ խրախուսում էր դպրոցների հոգաբարձուներին և ուսուցիչներին: Իսկ երբ ցարական իշխանությունները փակեցին հայկական

դպրոցները Արևելյան Հայաստանում, կանոնավոր գործող միակ ուսումնական հաստատությունը մնաց Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Խրիմյանի օրոք հեղինակավոր մտավորականներ էին ճեմարանում դասավանդող մանկավարժները՝ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, Մ. Արեղյան, Կ. Կոստանյան, Հովհ. Հովհաննիսյան, Գարեգին վրդ. Հովսեփյան, Կոմիտաս, Եկմալյան, Հ. Մանանդյան, Ստ. Լիսիցյան, Վ. Սուրենյանց և ուրիշներ: Հարկ է նշել, որ 1892-1907 թվականներին ճեմարանի տեսչությունը վարել են Սարգիս եպիսկոպոսը. Արիստակես եպս. Սեդրակյանը, Կարապետ Կոստանյանը, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Մեծ է հատկապես Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ավանդը ճեմարանի ուսումնական կյանքի կազմակերպման և հոգևոր դաստիարակության գործում: 1899 թվականին Կոստանյանի հրաժարականից հետո, հունիսի 30-ին, Խրիմյան Վեհափառի N 298 կոնդակով ճեմարանի տեսուչ է կարգվում նախկին տեսչի օգնական Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը (տե՛ս «Արարատ», 1899, էջ 291): Կարապետ վարդապետը, ճեմարանն ավարտելուց հետո, իր ուսումը շարունակել էր Գերմանիայի նշանավոր համալսարաններում, ապա վերադարձել էր Մայր Աթոռ և Աստվածաբանության դասախոս էր հոգևոր ճեմարանում: Ուսանողության համար նա մշակեց Աստվածաբանական ուսուցման նոր մերոդ (եղանակ), որով նրանց հաղորդակից էր դարձնում եվրոպական լուսավորության շրջանի փիլիսոփայությանն ու եվրոպական նոր շրջանի Աստվածաբանական ըմբռնումներին: Մեծ է եղել նրա դերը ճեմարանի կրթական-դաստիարակչական առաջադիմության գործում: Թեպետ նրա տեսչության ժամանակահատվածն ընդգրկում է երեք տարի, բայց այդ տարիները ճեմարանի համար եղան հոգևոր և կրթական վերափոխման ու առաջադիմության տարիներ:

Խրիմյանի կաթողիկոսության շրջանում ճեմարանում առարկաները բաժանվում էին 3 խմբի.

1) Կրոնագիտական՝ Աստվածաբանություն, Հայրաբանություն, Հայ եկեղեցու պատմություն, Ընդհանուր եկեղեցու պատմություն, Հին և Նոր Ուխտերի պատմություն, Միսագիտություն, Բարոզագիտություն, Շարականագիտություն:

2) Հումանիտար գիտություններ՝ Հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), լատիներեն, հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, այնուհետև՝ ռուսաց լեզու, պատմություն, հայոց մատենագրություն, հայագիտություն, գրականություն. վայելչագրություն, գծագրություն. նկարչություն:

3) Բնական գիտություններ՝ [illegible], ֆիզիկա, երկրաչափություն, աշխարհագրություն, բուսաբանություն. ասուլագիտություն. մարդաբանություն:

Սկսած 1906-07 թվականներից ճեմարանում դասավանդվում է նաև իրավագիտություն, տնտեսագիտություն, ազգագրություն առարկաները[1]: Նշենք նաև, որ կրոնագիտական առարկաների ծրագրերը արժանանում էին անձամբ Վեհափառ Հայրապետի քննությանն ու հաստատմանը: Առարկաների բազմազանությունը ճեմարանում, հատկապես բնական գիտություններին վերաբերող առարկաները, մեկ անգամ ևս ապացույց են այն բանի, որ Մկրտիչ Ա-ի գահակալության տարիներին ճեմարանը Հայաստանում հանդիսացել է միակ պարբերաբար, հստակ կրթական ծրագրերով գործող ուսումնական կենտրոնը:

---

[1] Տե՛ս. Գամաղելյան, «Նվիրում կրթական գործին», 1986 թ., էջ 69:

Ճեմարանում եկեղեցական տոների կապակցությամբ հաճախ կազմակերպվում էին տարբեր հանդիսություններ: «Արարատ» ամսագիրը թերթելիս՝ հաճախ ենք հանդիպում այսպիսի միջոցառումների մասին տեղեկությունների և դրանցից իմանում ենք, որ զանազան առիթներով հավաքված ուսանողությունն ինչպես է ոգևորվում Խրիմյանի հայրենաշունչ քարոզներից, ինչպիսի ոգևորությամբ է կատարում շարականները ու ժողովրդական երգերը՝ Կոմիտասի նվագակցությամբ, թե ուսանողությունն այս ամենից տպավորված լինելով ինչ առաջընթաց է ապրում: Այս բոլոր հանդիսությունները ու երեկույթները նպաստում էին ճեմարանի ուսանողության գեղագիտական նաշակի ձևավորմանը և նրանց կապում էին գիտության, արվեստի, մշակույթի ավանդների հետ, բարձրացնում սաների իմացական մակարդակը: Անավասիկ, այս կյանքով էր ապրում հոգևոր ճեմարանը Մկրտիչ Ա-ի կաթողիկոսության տարիներին: Այդ տարիներին, ճեմարանի հարկից ներս, ականավոր հայ մտավորականների դասավանդությամբ և նրանցից փոխանցվող հարուստ փորձով կրթվում էր մտավոր և իմացական կարողություններով օժտված մի սերունդ: Թեպետ Մկրտիչ Ա-ի ջանքերով 1905 թվականին վերաբացվեցին Հայաստանի ծխական և մյուս դպրոցները, սակայն ճեմարանի ճեղինակությունն ու կարևորությունը պահպանվեց, իսկ նորաբաց դպրոցների վերազարթոնքին և բարգավանմանը նպաստեցին ճեմարանավարտ ուսուցիչները:

II

«Գիրն անբաժան գենքն է
Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասաւորութեան
նուիրական կոչումին զինուորագրուած մարդուն»
ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Այժմ տեսնենք, թե Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի օրոք էջմիածնի միաբանության մեջ ինչ ճանաչված դեմքեր կային, և նրանք իրենց գործունեությամբ մեր մշակույթի որ ճյուղի զարգացմանն են նպաստել:

Խրիմյան Վեհափառի հայրապետության տարիներին Հայաստանն ապրում էր ծանր օրեր: Ժողովուրդը, չճաշտվելով իր ծանր կյանքի և ստեղծված վիճակի հետ, լքում էր մայրենի երկիրը, բռնում Անդրկովկաս և Ռուսաստան տանող պանդխտության ճանապարհները: Իր ժողովրդի ցավերով ապրող և տառապող Խրիմյանը, լինելով ողջ ազգի Հայրիկը, տեսիլքով տեսնելով իր ժողովրդի լուսավոր ապագան, հուսադրում, դաստիարակում է իր հոտին: Մկրտիչ Ա-ը այդ ծանր իրավիճակում խիստ կարևորում էր ժողովրդի ազգային նկարագրի պահպանումը: Այս առումով անժխտելի է նրա «Պապիկ և թոռնիկ» ստեղծագործության դերը: Խրիմյանն այս գործով նպատակադրվում է, Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի բառերով ասած. «Ցեղաշրջում յառաջ բերել այդ ժողովրդի կեանքին մէջ դաստիարակչական աշխատանքով, կրթական միջոցներով՝ բարձրացնելու համար ժողովուրդը դէպի աւելի լուսաւոր ու ազատ գիտակ-

ցուբեան մը, դէպի աւելի բարոյական ըմբռնումներու հորիզոն մը...»[2]: «Պապիկ և թոռնիկ» գործը Խրիմյանի՝ նաև հայ գյուղացու հանդեպ ունեցած գերագույն սիրո արտահայտությունն է. «Պապիկ և թոռնիկ քեզ համար գրեցի ե քո անվան նվիրում եմ իմ սիրելի դաշտարնակ մշակ ժողովուրդ...»[3]: Այս աշխատության մեջ Խրիմյան Հայրապետը տալիս է հայ գյուղական կյանքի հարազատ նկարագիրը՝ իր բարդություններով և հոգեվիճակով: Եվ ապա, այդ ծանր կյանքն իմաստավորելու, նշմարիտ ուղղու վրա դնելու համար նա տալիս է իր իմաստուն խրատներն ու խորհուրդները: Շարունակ գովերգվում է հայրենի հողի հանդեպ մշակի ունեցած սերը: Խրիմյանը ժողովրդին հողի տերն է համարում, դժբախտ է համարում հայ գյուղացուն այն դեպքում, երբ նա լքում է իր հայրենի հողը: Ահա թե ինչ է պատմում պապիկը. «Այո՛, Հայրիկ մի կարչ պատասխան տուաւ, խեղճ գաւակներս, ասաց, այդ բեռը պիտի կրեք մինչև կարդալ-գրել սորուեք, մինչև նանչնաք ձեր գեղին ու հողին արժեքը, ուր եթե թափէիք ձեր այդ չափ աշխատութեան քրտինք, երբէք պանդխտութեան երես չէիք տեսնար»[4]: Խրիմյանի այս գործը հայ մարդուն ավանդում է.

1) Սեր հայրենի հողի նկատմամբ, որով է պայմանավորված հայ գյուղացու նախատագիրն ու ինքնուրույնությունը, որով իմաստավորվում է նրա կյանքը: Խորհրդանշական է պապիկի՝ թոռին պսակելը հողի հետ, որը հայրենի հողի հանդեպ ունեցած ջերմագին սիրո արտահայտությունն է. «Եվ ինչպես Շուշանին հետ կապեց դլուզ քահանան, և դու տեր ես մինչեւ ի մահ, կարող չես զինքն թողուլ, այնպես ես՝ պապիկն՝ զքեզ պսակելով կը կապե մայրենի երկրին հետ, որ հավիտյան չը պիտի թողուս»[5]:

2) Հարգանք եկեղեցու և հավատքի նկատմամբ, որն արտահայտվում է պապիկի մեռնելուց առաջ եկեղեցի գնալով. «Պետք է խոստովանիմ, աղոթեմ, վերջին Պատարագ տեսնեմ, Սուրբ Հաղորդություն առնեմ, այն է՝ իմ վերջին թոշակս. կը հավատամ, որ այդ Քրիստոսի ավանդած Կենաց Հացի թոշակով արժանի կլինեմ Սուրբ Արքայության»[6]:

3) Աշխատասիրություն, որ Խրիմյան Հայրիկը գեղեցկորեն արտահայտում է պապի հոգին ավանդելու պատկերի մեջ. «Եթե յուրաքանչյուր, ինչ որ ցաներ է այս աշխարհիս մեջ՝ զայն պիտի հնձե անդիի աշխարհ, ուրեմն երկնից Արքայության մեջ ինձ համար գործ կա, այստեղ ցանածս, այնտեղ բուսած կլինի և հնձած է այժմ, իմ գերանդիս հետս առնեմ, որպեսզի ցանածներս քաղեմ»[7]:

4) Ընտանեասիրություն: Ընտանիքը միշտ էլ եղել է յուրաքանչյուր հայի բարոյականությունը և արժանապատվությունն արտահայտող օրրանը, ուստի պապիկը կտակում է. «Այրի քո ծնող մայրիկիդ, որ այսօր մեր տան տանտիկինն ու տնտեսն է, պետք է ամենայն ակնածությամբ պատվես իբրև ծնող մայր..., յուր

---

2 «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ», Նյու Յորք, 1987 թ., էջ 18:

3 «Պապիկ և թոռնիկ», Երևան, 1992, էջ 22:

4 Նույն տեղում, էջ 26:

5 Նույն տեղում, էջ 137:

6 Նույն տեղում, էջ 160:

7 Նույն տեղում, էջ 178:

ծերության ժամանակ ամեն խնամք պետք է տանես նորա վրայ»[8]: Մի ուրիշ տեղում. «Կավանդեմ քեզ, մեր նահապետական տան պատկառանքն ու պարկեշտությունն. պետք է անեղծ պահես այդ տոհմական առաքինությունն»[9]: Մկրտիչ Ա Կաթողիկոսի «Պապիկ և թոռնիկ» գիրքը եղավ հուստդրող լույսը հայ ժողովրդի կյանքի ծանր օրերում: Ահա թե ինչ է գրում Թորգոմ Գուշակյան Պատրիարքն այս գրքի նշանակության մասին. «Այն փառքն է սակայն հայ սրտին և հայ հոգեբանության. անիկա անլուռ ապացույցն է այն սփոփիչ իրականության. թե Հայ Եկեղեցիին հոգին հայ ժողովրդին սրտին մեջ միայն կրնա տրոփել, ու իր պետին համար չկա ավելի արժանավոր մտագրավում մը քան ժողովրդին կյանքն ու ապագան»[10]:

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան

Մկրտիչ Ա-ի կաթողիկոսության տարիներին, Գևորգյան նեմարանի առաջին սերնդի հայ հոգևորականների կողմից որոշակիորեն զարգացվում էր Աստվածաբանական միտքը էջմիածնի միաբանական կյանքում: Այս շրջանում Աստվածաբանական մտքի ջահակիր կարելի է համարել Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանին: Ահա թե ինչ է գրում նա. «Աստուածաբանութիւն կոչուած գիտութիւնը բոլորովին այն չէ, ինչ որ մեր ուսումնականները երեւակայում են, այլ մի ուրիշ, քաղաքակիրթ աշխարհի հետ շփումն ունեցող եկեղեցւոյ համար անհրաժեշտ բան...»[11]: Նա Աստվածաբանական բազում հոդվածներով և խմբագրականներով 1894-1903 թթ. հանդես է եկել «Արարատ» ամսագրի էջերում: Այդ հոդվածների ժողովածուն՝ «Քրիստոնեության իսկությունը», վերջերս՝ 1993 թվին, հրատարակվել է Անթիլիասում, նախաձեռնությամբ Գարեգին Բ Կիլիկիո, իսկ այժմ՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Եվ Ճիրավի Կ. եպս. Տեր-Մկրտչյանն իր Աստվածաբանական մտքի ընդունությամբ և իմաստությամբ վեր է հանում քրիստոնեական դավանանքը բնորոշող գծերը, համոզիչ փաստերով ապացուցում դրանց իսկությունը, իսկ իսկությունը հասկանալու համար՝ քարոզում հավատ և սեր:

Կարապետ եպիսկոպոսը որպես Աստվածաբան փայլեց իր «Պողիկյանները Բյուզանդական կայսրության մեջ և ցեղակից երևույթներ Հայաստանում» գործով, որը Գերմանիայում սովորելու տարիներին նրա դոկտորական թեզն էր[12]: Այն լույս տեսավ 1893 թվին Լայպցիգում և պատնառ դարձավ, որպեսզի Եվրոպայի մի քանի աստվածաբաններ որոշակի ուսումնասիրեն պավլիկյան աղանդը: Կարապետ եպիսկոպոսի անվան հետ են կապված նաև Աստվածաբանության ասպարեզի երկու կարևոր ձեռագրագիտական հայտնություններ.

1) 1897 թվին նա ձեռագրերի էջերում գտավ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն Քաղկեդոնի ժողովի դեմ» դավանաբանական գործը, որի հունարեն բնագիրը չէր պահպանվել:

---

8 Նույն տեղում, էջ 160:

9 Նույն տեղում, էջ 161:

10 «Խրիմյան Հայրիկ», 1990, Անթիլիաս, էջ 152:

11 «Արարատ», 1899, էջ 426:

12 Մ. Աբեղյան, երկեր, Է, էջ 441:

2) 1904-ին Սուրբ Իրենիոսի «Ցոյցք առաքելական քարոզութեան» աշխատության հայերեն միակ օրինակը, որի բնագիրը ևս չէր պահպանվել: Այս երկու գործերի հրատարակումը խորը ազդեցություն գործեց ժամանակի միաբանական մթնոլորտի վրա՝ գրավելով նաև ուշադրությունը եվրոպական հայագետների: Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանն այս շրջանում ամբողջացրեց նաև բանահյուսական, հայագիտական և ազգագրական շատ ուսումնասիրություններ, որոնք պարբերաբար տպագրվում էին ժամանակի «Արարատ» ամսագրի էջերում: Նա մեր եկեղեցու որդեգրած Աստվածաբանությանը հաղորդեց իր ժամանակաշրջանի գիտական ուղղվածությունը և զարգացրեց այն՝ իր առանձնահատուկ ուրույն մտածողությամբ:

Մեսրոպ արք. Սմբատյանց, Խաչիկ վրդ. Դաղյան

Խրիմյան Կաթողիկոսի գահակալության օրոք էր գործում նաև Մայր Աթոռի միաբան, հնագետ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, որն իր բազում գիտական-հրատարակչական աշխատություններով նպաստել է հնագիտության զարգացմանը: Նրա համար ուսումնասիրության հիմնական բնագավառ է եղել հատկապես բևեռագրությունն ու տեղագրությունը, որը դարձել է նրա բազմաթիվ աշխատությունների հիմքը: Նա մեծ թվով սեպագիր արձանագրություններ է հայտնաբերել և դրանք հրատարակել «Արարատ» ամսագրում[13]: Հիշատակելի է նրա «Տեղագիր Գեղարքունի Մովազարդ գավառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» գիրքը, որը Խրիմյանի ժամանակաշրջանում լույս տեսավ:

Մեսրոպ արքեպիսկոպոսն այս գրքում նկարագրում է այնպիսի վանքեր և եկեղեցիներ (Երևանի Սուրբ Պողոս և Պետրոսը, Կաթողիկեն), որոնք քանդվել են 20-րդ դարի 30-50-ական թվականներին, բոլշևիկների վարած աթեիստական գազանաբարո քաղաքականության պատճառով և հիմա գոյություն չունեն: Այս գրքի պատմական արժեքը կարևորվում է հինգ սեպագիր արձանագրությունների նկարագրմամբ, որոնք մեծ դժվարությամբ հայտնաբերել և ուսումնասիրել է Մեսրոպ արքեպիսկոպոսը: Գրանք մեր պատմության ձևավորման շրջանին վերաբերող քարե վավերագրեր են:

Հայոց Գեղարքունիք գավառի և հարակից շրջանների տեղագրությունը Սմբատյանցի տասնյակ ուսումնասիրություններից մեկն է, որը ընթերցողին անմիջականորեն կապում է իր հայրենիքի, իր նախնիների և իր պատմության հետ: Այս գիրքն ունի և՛ պատմական, և՛ գեղարվեստական, և՛ լեզվագիտական բարձրարժեք նշանակություն:

Խրիմյանի կաթողիկոսության շրջանում էր, երբ Էջմիածնի միաբան Խաչիկ վրդ. Դաղյանի ջանքերով պեղվեց և հայտնաբերվեց հրաշակերտ Զվարթնոցի տաճարի ավերակները, որոնց հիման վրա Թորոս Թորամանյանը վերականգնեց տաճարի կառուցվածքային հատակագիծը: Նշենք նաև, որ Խաչիկ վրդ. Դաղյանի հնագիտական աշխատություններին առնչվող մի շարք հոդվածներ են հրատարակվել «Արարատ» ամսագրում[14], որոնցից տեղեկանում ենք հնագիտական արժեքավոր գտածոների մասին:

---

13 «Արարատ», 1894, էջ 373-375, 1895, էջ 348, 204-206 և այլն:

14 Տե՛ս «Արարատ», 1895 թ., էջ 426, 313:

Գարեգին վրդ. Հովսեփյան և Կոմիտաս

Այս շրջանում հայագիտական և բանասիրական մեծ գործունեություն ծավալած եռանդուն գործիչներից էր Գարեգին վրդ. Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոս): Նրա հայագիտական բարձր պատրաստվածությանը ծանոթանում ենք՝ կարդալով Սր. Էջմիածնի ժամանակի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրում տպագրված «Հայագիտական տեղեկություններ» խորագիրը կրող հոդվածաշարը[15]: Այս հոդվածներով Գարեգին վարդապետը տեղեկացնում է մեզ հայագիտական որևէ նորության մասին և ապա կատարում գիտական վերլուծական եզրակացություն: Հարկ եմ համարում թվարկել Խրիմյանի օրոք լույս տեսած նրա հայագիտական-բանասիրական գործերը: 1890 թ. լույս է տեսնում գիտնական-վարդապետի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» և «Սասնա ծռեր» գրքերը, որոնցից վերջինը հայկական ժողովրդական էպոսի նորահայտ մի տարբերակի նրա գրառումն է: 1899-ին՝ «Մխիթար Սասնեցի», «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ»՝ 1902-ին, 1903-ին՝ «Խոսրովիկ Թարգմանիչ», և 1905-ին՝ «Ռոստոմ ժողովրդական վեպը Մոկաց բարբառով» աշխատությունները[16]: Այս ուսումնասիրություններից հիշարժան և հանրահայտ է 8-րդ դարի պատմիչ Խոսրովիկ թարգմանչի մասին ծավալուն հոդվածաշարը, որը տպագրվել է «Արարատ» ամսագրում 1899 թ. մայիսից մինչև դեկտեմբեր լույս տեսած համարներում: Այս ուսումնասիրության մեջ Գարեգին վարդապետը անդրադարձել է 8-րդ դարի հայ մշակույթի պատմության հարցերի համեմատական քննությանը և բացահայտել այդ շրջանի և հատկապես Խոսրովիկ թարգմանչի մատենագրության գեղարվեստական և լեզվաոճական յուրահատկությունները, հաստատել այդ գործերի Խոսրովիկին պատկանելը:

Հայագիտության մեջ հայ երաժշտական ազգագրության գիտական ուսումնասիրության հիմնադիրն է եղել Կոմիտաս վարդապետը: 1899 թ. նա դասախոսություն է կարդում Բեռլինում և օտարներին ծանոթացնում մեր ազգային-եկեղեցական երաժշտությանն ու երգարվեստին: Կոմիտասը հեմարանում ուսանելուց և Մակար Եկմալյանի մոտ կատարելագործվելուց հետո (1896-99 թթ.), Խրիմյան Հայրիկի աջակցությամբ մեկնում է Գերմանիա և իր երաժշտական ուսումնառությունը կատարելագործում Բեռլինի երաժշտանոցում: Վերադառնալով Էջմիածին, նա իր ողջ իմացական կարողությամբ նվիրվում է ազգային երաժշտության զարգացման գործին: Ահա այս ժամանակ է, որ անվանի հայագետ-բանասեր Մանուկ Աբեղյանի հետ կազմում է «Հազար ու մի խաղ» երգարանի առաջին մասը: Կոմիտաս վարդապետը, գեղջկական կյանքից վերցնելով ժողովրդական երգերը, դրանց մեջ հայտնաբերելով եղանակների յուրահատուկ հնչողություններին հերդաշնակություն, երաժշտական-գեղագիտական հաշակ, ազգային երանգ, մշակել է, հղկել դրանք և փոխանցել դարերին: Նրա վիպերգերը, անտունիները, հոգևոր երգերը, Աստվածահնչուն Սուրբ Պատարագի երգեցողությունը դասվում են հայ ժողովրդի մշակութային մեծագույն հայտնություններին շարքը:

Հիշատակության է արժանի նաև մեր եկեղեցու հոգևոր երաժշտական կյանքում տեղի ունեցած կարևորագույն մեկ իրադարձություն՝ 1899 թվականին,

---

15 «Արարատ», 1900, էջ 76, 266:

16 Գամաղելյան, «Նվիրում կրթական գործին»:

Խրիմյան Հայրիկի կոնդակով, եկեղեցիներում թույլատրվեց Մակար եկմալյանի քառաձայն Պատարագի կատարումը, որի երկնային հնչեղությունը ջնջում է ժամանակի և տարածության զգացողականությունը և հայ հավատացյալի հոգին բարձրացնում երկինք, լսողին դարձնում ունկնդիր եղեմական ջինջ ելևէջների:

Վերը մենք փորձեցինք ներկայացնել էջմիածնի մշակութային կյանքը Խրիմյան Կաթողիկոսի օրոք և փորձեցինք բնութագրել ժամանակի նշանավոր մշակութային գործիչների և լուսավորության ասպարեզի մշակ հոգևորականների գործունեությունը: Այդ ժամանակաշրջանի մշակութային և գիտական կյանքի զարգացման գործում մեծ է եղել նաև ուրիշ շատ հոգևորականների և աշխարհիկ մտավորականների դերը. նրանցից են՝ երվանդ Տեր-Մինասյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ստեփանոս Լիսիցյանը, Մակար եկմալյանը, Կարա-Մուրզան, Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը և ուրիշներ, որոնք նպաստել են այդ ժամանակաշրջանի հայագիտության, լեզվագիտության, պատմագիտության, գրականության և արվեստի տարբեր բնագավառների զարգացմանն ու ծաղկմանը: Սակայն նրանց գործը չպարփակվեց միայն իրենց տպրած ժամանակի մեջ: Նրանց ստեղծագործությունները ոչ թե մի ժամանակաշրջանի համար էին, այլ մեր ժողովրդի ամբողջ պատմության համար:

«Գրքով ու գրով հայտնված, միտքն ու գաղափարը
ոչ միայն ավելի հարատև է, այլև ծավալված
ըստ ժամանակի և տարածության»
ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ

III

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խրիմյան Հայրիկի օրոք տպագրության ասպարեզում ևս նկատելի առաջընթաց արձանագրեց, որը ժողովրդին գիր ու գրականությանը, մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելու միջոց հանդիսացավ: Մշակույթի, գիտության, լուսավորության ասպարեզի բոլոր նվաճումներին ժողովուրդը հաղորդակից էր դառնում տպագրության միջոցով: Հիրավի, Խրիմյանի ժամանակ տպագրության կենտրոն էր դարձել Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի ջանքերով 1771 թվին հիմնված Մայր Աթոռի տպարանը: Հայրիկը տպարանի դերը կարևորելով ժողովրդին կրթելու գործում, 1889 թվականին կառուցում է տպարանի նոր շենք, և մի շարք բարեփոխությունների արդյունքում կատարելագործվում և հարստանում է տպագրական տեխնիկան և տառերի տեսականին, որից էլ բարձրանում է տպագրական արտադրանքի որակը: Տպարանի, այդ շրջանում կատարելագործման իրողությունն է վկայում այն փաստը, որ 1895 թվականին Մայր Աթոռի տպարանը մասնակցում է Պետերբուրգում բացված տպարանական ցուցահանդեսին[17]:

Մկրտիչ Ա Կաթողիկոսի օրոք Մայր Աթոռի տպարանում լույս տեսան եկեղեցական-գիտագիտական գրքեր՝ Մաշտոցներ, ժամագրքեր, Աստվածաբա-

---

17 «Արարատ», 1895, էջ 70:

նական, կրոնա-բարոյական, երաժշտագիտական, ճնագիտական, բանասիրական և այլ բովանդակությամբ գրականություն:

Հիմնվելով «Արարատ» ամսագրում տպագրված նրատարակչական նորությունների և հոգևոր նեմարանի գրադարանի գրքացանկերի հաշվառման վրա, փորձենք ներկայացնել Խրիմյանի կաթողիկոսության ժամանակ Մայր Աթոռի տպարանում լույս տեսած գրքերի մատենագիտությունը.

1. Նոր Կտակարան-1906
2. Ցուղաբերից Ավետարան-1905
3. Հին և Նոր Կտակարաններ-1905
4. Ժամագիրք-1903
5. Մաշտոց-1905
6. Տոնացույց-1906
7. Մ. Եկմալյանի քառաձայն երգասացությունք Ս. Պատարագի-1899
8. Ն. Նեպին, «Ի՞նչ է ճշմարտությունը», թարգմ.՝ Հ. Մամբրե վարդապետի-1903
9. Ամբրոսիոս Գալֆայան, «Պատմութիւն Աստուածաշունչ Սուրբ Գրոց Հին Կտակարանի»-1897
10. Գր. Խալաթյանց, «Ա և Բ Մնացորդաց գրքերի նորագիւտ հայ թարգմանութիւնը»-1896
11. Հայրիկ, «Հիսուսի վերջին շաբաթ», «Խաչի ճառ» և «Կորուսելոյ իմաստութեան»-1894
12. Պետրով Հ., «Ավետարանը պատմության մեջ»-1902
13. Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցի, «Զանազանութիւն հինգ դարուց», եռանատոր-1902
14. Էմմանուել Խաչատրյանց քահանա, «Պարզ քարոզներ»-1895
15. Արշակ Տեր-Միքայելյան, «Աստուածաբանական գիտութիւններ»-1893
16. Արսեն վրդ. Բագրատունի, «Հոգևոր՝ ընթրիք քրիստոնեա ընտանիքների համար»-1901
17. Հայր Մակար Բարխուդարյանց, «Մատչելի քարոզներ»-1901
18. «Կրօնաբարոյական խորհրդածութիւններ»-1896
19. Տոդդ. «Մեղքի զղջումն»-1894
20. Ֆ. Ֆարրար, «Քարոզներ»-1901
21. Մխիթար վրդ., Տիգրանյան Սիրական, «Կանոնք Դվնայ Ս. Ժողովոյն»-1905
22. Սուվորով Ն., «Եկեղեցու և պետութեան հարաբերութիւնները»-1902
23. Պետրով, «Զգաստութեան առաքյալներ»-1905
24. «Մաղթանք վասն Հայրապետի ազգիս»-1895
25. Հովհան Կրոնավոր, «Նկարագրութիւն հոգեւոր վարուց Հովասափու որդւոյ թագաւորին հնդկաց»-1897
26. Հուսիկ վրդ. Մովսիսյան, «Անապատականներ և վանականութիւն»-1906
27. Խրիմյան Հայրիկ, «Մարգարիտ Արքայութեան Երկնից»-1894
28. Հովհաննես եպիսկոպոս, «Յերուսաղեմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Արաս Աղուանից կաթողիկոս»-1896

29. «Սոկրատայ պատմութիւն եկեղեցւոյ և վարք Սրբոյն Սեղբեստրոսի»-1897
30. «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն»-1897
31. «Կրօնի և կրօնի գիտութեան էութիւնը»-1907
32. Գր. Լուսավորիչ, «Ճանապարհապատում ճառք»-1894
33. «Խաչատուր արեղա Ջուղայեցու պատմութիւն Պարսից»-1903
34. Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյան, «Ուղեւորութիւն Տ. Տ. Մկրտիչ Ա Վեհափառի Ամենայն Հայոց երուսաղեմից Էջմիածին»-1894
35. Գ. վրդ. Հովսեփյանց, «Մխիթար Սասնեցի»-1899
36. Կ. Կոստանյանց, «Տէր Պետրոս Ա Գետադարձ»-1897
37. Կ. վրդ. Տեր-Մկրտչյան, «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոպայ»-1897
38. Կ. Կոստանյանց, «Հակոբ Կարնեցի»-1903
39. Կ. Կոստանյանց, «Ս. Լուսավորչի օնախը»-1896
40. Ղլտճյան Արսեն վրդ., «Կանոնք Պարտավի ազգային ժողովոյն»-1905
41. Ղլտճյան Արսեն, «Կանոնք Ներսես Բ Կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսին»-1905
42. Մխիթար վրդ., «Հայերը Ռուսաստանում»-1905
43. «Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցին և իր Սուրբ կարգը»-1897
44. Գալուստ Տեր-Մկրտչյան, «Գրիգոր-Մանանդեանը Ռաժիկ Մինրան տոնմից»-1902
45. Գ. Տեր-Մկրտչյան, «Պետրոս Այուճյաց եպիսկոպոս»-1902
46. Գ. Տեր-Մկրտչյան, «Ստեփաննոս Իմաստասեր»-1902
47. Երվանդ Տեր-Մինասյան, «Բարեխոս և Ս. Գիրք»-1903
48. Խրիմյան Հայրիկ, «Թագաւորաց ժողով»-1900
49. Մեսրոպ Արքեպս. Ամբատյանց, «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ»-1896
50. Մինաս քահանա Խումաչյանց, «Ձայնագրեալ տաղարան»-1900
51. Մ. Աբեղյան և Կոմիտաս, «Հազար ու մի խաղ», I մաս-1904
52. Գ. Տեր-Մկրտչյան, «Գավիթ Հարքացի»-1903
53. Գևորգ Ախոյանց, «Կանոնադրութիւն Կոտէից գաւառի հայ քահանաների միութեան»-1907
54. Հովհան Իմաստասեր, «Ցովհան Իմաստասէր Հայոց կաթողիկոսի խոստովանութիւնք»-1896
55. Հուսիկ վրդ. Տեր-Մովսիսյան, «Հայրապետական Աթոռի մասին համառոտակի տեղեկութիւն»-1904

Այդ ժամանակաշրջանում մեր եկեղեցական և մշակութային կյանքում կարևոր իրադարձություն էր Էջմիածնի «Արարատ» պաշտոնաթերթի ավելի ժամանակին համահունչ բովանդակությամբ լույս ընծայումը: Եթե Խրիմյանի ժամանակ Ս. Էջմիածինը Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոնն էր, ապա Մայր Աթոռի «Արարատ» պաշտոնաթերթը այդ մշակույթը ժողովրդին փոխանցողը եղավ: Անգնահատելի է այս ամսագրի դերը լուսավորության բնագավառում: Խրիմյանի ժամանակաշրջանում այն դարձել էր մի ողջ ժողովրդի մշակութային

հանրագիտարան: Թերթելով այդ շրջանի «Արարատի» էջերը, մենք տեսնում ենք Աստվածաբանական, բանաճյուսական, կրոնագիտական, բարոյագիտական, հայագիտական և անգամ տնտեսագիտական և կենցաղային բովանդակությամբ հոդվածաշարեր: Ժամանակի հոգևոր և մշակութային գործիչների կարևորագույն ուսումնասիրություններով են զարդարվել «Արարատի» լուսապայծառ էջերն այս շրջանում: Չենք կարող չնշել Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի խմբագրության (1894-99 թթ.) տարիները, որոնք «Արարատ» ամսագրի համար եղան մշակութային և գիտական բեղուն տարիներ: «Արարատ» ամսագիրը մինչև հիմա էլ չի կորցնում իր մշակութային և գիտական արժեքն ու նշանակությունը:

Խրիմյանի կաթողիկոսության ժամանակահատվածում տպագրական գործի թագն ու պսակը պիտի հանդիսանար նոր, դյուրըմբռնելի լեզվով Աստվածաշունչ Մատյանի հրատարակությունը: Դեռևս մեր Սուրբ թարգմանիչ վարդապետները, տառերի ստեղծումից անմիջապես հետո, առաջինը սկսեցին թարգմանել Աստվածաշունչ Մատյանը:

Հետագայում Սուրբ Գրքի աշխարհաբար թարգմանություններն իրենց թարգմանական և լեզվական անկատարությամբ չէին համապատասխանում ժողովրդական մտածողությանն ու գիտակցությանը: Խրիմյան Վեհափառը կատարյալ աշխարհաբարով Սուրբ Գրքի թարգմանության հրատարակությունը համարում էր հայ ժողովրդի բարոյական կյանքը ձևավորող կարևորագույն գործոնը: Անհրաժեշտ էր Աստվածաշնչի նոր հրատարակությունը, որպեսզի Աստվածային Լույսն ու Գիտությունը սփռվեր ողջ հայ ժողովրդի հոգևոր անդաստանում: Մկրտիչ Ա-ը նպատակադրվեց իրականացնել իր երազանքը: Նա Գյուտ և Մեսրոպ քահանաներին ուղարկեց Եվրոպա՝ տպագրության գործը նախաձեռնելու համար: Նա էջմիածին հրավիրեց Նորայր Բյուզանդացուն (որը չեկավ): Սակայն Խրիմյանի իղձերը չիրականացան երկրում տիրող քաղաքական և տնտեսական ծանր իրավիճակի պատճառով: Ինչևիցե, Խրիմյանի այս ձեռնարկը սկիզբ հանդիսացավ՝ հետագայում Աստվածաշունչ Մատյանի կատարյալ թարգմանությունների (լեզվագիտական իմաստով) իրականացման համար:

* * *

Ամփոփելով ասենք, որ ուսումնասիրելով մեր տրամադրության տակ եղած որոշ նյութեր, մենք եկանք այն հաստատ եզրակացության, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը Մկրտիչ Ա Խրիմյանի կաթողիկոսության՝ հայ ժողովրդի համար ծանր և դրամատիկ այդ տարիներին իր մեծ ու անգնահատելի դերը ունեցավ մեր մշակույթի վերազարթոնքի նվիրական գործում: Շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազմավաստակ գիտնական հոգևորականների անգնահատելի աշխատանքի, Եվրոպայի անվանի մշակութային գործիչներն իրենց ուշադրությունը սևեռեցին դեպի Հայաստան: Ճիշտ այս ժամանակ բանասիրության, պատմագիտության, հայագիտության և մի շարք այլ բնագավառներ վերելք ապրեցին:

Այսօր էլ մեր դպրոցն ու մշակույթը կենսահաստատման ու պայքարի բովով են անցնում: Թերևս մեր ժողովրդի ճակատագրով էր պայմանավորված, որ մշակութային բազում արժեքներ պիտի ստեղծվեին պատմության դաժան քառուղիներով անցնող ժողովրդի կյանքում, հենց այդ դժվարին ճանապարհին: Ինչպես Մկրտիչ Ա Խրիմյանի օրոք, այնպես էլ այսօր մշակույթը մնում է որպես հզոր զենք մեզ համար՝ պայքարելու, գոյատևելու և հաղթելու համար: